

փողս և թմբուկս, և ունէին բարձեալ ի վերայ ձողի շինած զհին գործսն ապրճեղէն:

ժե. Եւ ապա եկն բանակ ոսկերչին եւ ընդ սոցա էր եւ զապղէճին եւ զլըճչին՝ նոյնպէս զգեստով եւ զինուք:

ժը. Եւ ապա եկն զնետ եւ զաղեղն շինող. նոյնպէս պետք ձիօք եւ գօրօք իւրեանց եւ քիւրքճին ընդ իւր:

ժթ. Եւ ապա սառած նոյն կերպիւ, եւ եւս զիւրեանց զգործիսն ցուցեալ տանէին, և ընդ սոցա զըպան եւ սախան:

ի. Եւ ապա մութաֆն եւ նալպանտն:

իա. Եւ զանթարճին եւս նոյնպէս ուրոյն ի նոցանէ:

իբ. Եւ սէմէրճին որ զփալանս շինէր:

իգ. Եւ ապա պողածին յետոյ քան զամենեսեան ցանէր յաջ եւ յահակ զկորեկ ի վերայ ամբօխն:

Ընդ ամէնն արհեստաւորացն բանակ ուրոյն ուրոյն ԻԿ. ընդ նոսին որք երթային զկնի՝ Լ եւս, որ լինի համանգամայնն ՄԿ արհեստաւոր: Այսպէս կարգ կարգ և դաս դաս կղեալ ամենայն արհեստաւորացն՝ բանակ արարեալ եւ առաջի թագաւորին եւ ամենեքեան ուրոյն գային մնային եւ տային գաւրհնութիւն եւ նա տեսանէր եւ բաշխս պարգևէր նոցա, եւ ապա անցանէին զնային եւ անտի ի տուն մեծ էֆէնտուն: Եւ ամենայն քաղաքս ել ի տեսանել զայսոսիկ յանցս ճանապարհին յերկու կողմս ընդ որ անցանէինն, մինչեւ տնարգել աղջկանց եւս ոչ մնացին ի տունս իւրեանց, այլ ամենեքեան մեծամեծք և փոքունք, իշխանք և ռամիկք յօրէ յառաջմէ տեղիս շինեալ եւ խանութս վարձեալ, զահս յօրինեալ¹⁾ ընդ որ անցանէինն, զի տեսանիցեն զբանական եւ զանցորդսն²⁾:

1) օրինեալ.

2) զյանցորդսն.